

7 ՀԱՐՑ՝ ԻՆՔՆԵՐԱ ՄԵՋ ԵՎ ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ





յուրաքանչյուր
երեխայի համար

Սույն ձեռնարկը տպագրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված:

Հիմնվելով 75-ամյա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար 25 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:

Ստեղծման պահից ի վեր՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է անհատների, մասնավոր հատվածի, հիմնադրամների և կառավարությունների կամավոր նվիրատվություններով:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք www.unicef.am և www.babycef.am կայքերը:

Բովանդակությունը՝	Խորհրդատվական հաղորդակցության և ծառայությունների կենտրոն /Աշխատանքի, հաշմանդամության և սոցիալական հարցերի նախարարության Երեխաների խնամքի և պաշտպանության բյուրո/ և Պլան Վիետնամ
Ջեդիանակային իրավունք՝	Խորհրդատվական հաղորդակցության և ծառայությունների կենտրոն և Պլան Վիետնամ
Արտատպված եզրույթները՝	Կրթական կամ ոչ առևտրային գործունեության շրջանակներում այս գիրքը կարող է արտատպվել կամ մեջբերվել առանց Կենտրոնի կամ Պլանի թույլատվության: Սակայն պարտադիր է հստակ նշել գրքի անվանումը:
Մեջբերում՝	Plan in Vietnam and Center for Consultative Communication and Services (Bureau of Child Care and Protection – Ministry of Labour, Invalids and Social Affairs)/, 2008. <i>7 questions to understand the children and ourselves.</i>
Առաջին հրատարակություն՝	2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Չափ 1

Ինչպե՞ս եք Դուք դաստիարակում Ձեր երեխային 4

Չափ 2

Ո՞ր տեսակին է պատկանում Ձեր երեխան 13

Չափ 3

Ինչո՞ւ են երեխաները ծնողներին նյարդայնացնող վարք դրսևորում 16

Չափ 4

Ինչո՞ւ մենք չպետք է պատժենք երեխաներին 18

Չափ 5

Ինչո՞ւ են մարդիկ հավատում, որ երեխաներին կարելի է դաստիարակել պատժի միջոցով 23

Չափ 6

Ինչպե՞ս դաստիարակել երեխաներին առանց ֆիզիկական և հուզական պատժի կիրառման 24

Չափ 7

Ինչպե՞ս վերաբերվել երեխաներին ըստ նրանց տարիքային առանձնահատկությունների 30

ՀԱՐՑ 1

Ինչպե՞ս եք Դուք դաստիարակում

Ձեր երեխային

Դուք կարող եք լինել հայր, մայր, ուսուցիչ կամ դասընթացավար. կարծում եք Դուք միշտ լա՞վ դիաստիարակ եք: Խնդրում ենք ծանոթանալ հետևյալ պատմություններին: Դուք երբևէ երեխայի հետ վարվե՞լ եք այս իրավիճակներից որևէ մեկը հիշեցնող կերպով, կամ տեսե՞լ եք, թե ինչպես են այլոք երեխայի հետ այդպես վարվում:

Պատմություն 1

Տուն հասնելով՝ պարոն Արմենը ոգևորված բացականչեց. «Ողջուն, Կարեն, ես քեզ գրանցել եմ մարտարվեստի խմբակում: Իսկ ևս մի քանի օրից դու կհաճախես նաև անգլերենի դասերի»: «Հայրի՛կ, ինչի՞ է պետք այդքան սովորելը: Ես դեռ պետք է իմ երգեհոնի դասերը պարապեմ: Ես հոգնում եմ», - պատասխանեց Կարենը դժգոհ դեմքով: «Որքան ավելի շատ սովորես հիմա, այնքան ավելի երջանիկ կլինես, տղա՛ն: Ես արդեն որոշել եմ: Քո միակ պարտականությունը սովորելն է: Սա այլևս ենթակա չէ՛ քննարկման»:

Պատմություն 2

Արմենը և Կարենը կռվում էին, երբ ներս է մտնում ուսուցիչը: Միայն ուսուցչին տեսնելուց հետո նրանք բաց են թողնում միմյանց: Ուսուցիչը խիստ զայրացած է: «Դուք չտեսա՞ք, որ ես

Ներս եմ մտնում: Դուք բացարձակ հարգանք չունե՞ք իմ
Նկատմամբ որպես Ձեր ուսուցչի: Դուք անկարգ և անփույթ
երեխաներ եք: Վաղվանից դուք կհեռացվեք դպրոցից:
Զվերադառնա՞ք դպրոց մինչև մյուս շաբաթ»: Արմենը փորձում է
արդարացնել իրեն, ասելով. «Ուսուցիչ, սա Կարենի մեղքն է:
Նա ասաց, որ ես հայր չունեմ»:

«Դա ինձ չի հետաքրքրում: Դուք երկուսդ էլ խախտել եք
դասարանային կանոնները և վատ օրինակ եք ծառայել մյուս
աշակերտների համար: Հենց հիմա փակե՞ք ձեր գրքերը և դու՛րս
եկե՞ք դասարանից», սառնորեն բղավեց ուսուցիչը՝ անտեղյակ
լինելով Արմենին պատած ինքնախղճահարության, անարդա-
րության և դժգոհության զգացումներից:

Պատմություն 3

Տատիկը դիմում է թոռնուհուն. «Արդեն վաղուց մենք մեղր չենք
հավաքել: Կարո՞ղ ես, ինդդում եմ, այսօր առավոտյան հավաքել
այն, քանի որ դպրոց միևնույն է չես գնալու»:

«Տատի՛կ, վախենամ այնտեղ չափազանց շատ են բզեզները»,-
պատասխանում է թոռնուհին: «Կարելի՞ է ես փոխարենը
բանջարանոցային աշխատանքներով զբաղվեմ: Ես կինդդեմ
եղբայր Արմենին օգնել մեզ և հավաքել մեղրը: Բանջարանոցը
պատվել է թավ խոտով»:

«Արդար առաջարկ է, սիրելիս: Իսկապես դժվար է հավաքել
մեղրը, երբ վախենում ես մեղրուներից: Կարող ես Արմենի
օգնությանը դիմել: Իսկ բանջարանոցում աշխատելը շատ լավ
միտք է, մենք կկարողանաք ավելի շատ բանջարեղեն արճեցնել»:
«Շնորհակալ եմ, տատի՛կ, ես հենց հիմա կանցնեմ գործի»:

Պատմություն 4

Նայելով ժամացույցին՝ տիկին Մարիամը վազում է դստեր սենյակ:
«Նարինե, սիրելի՛ն, արդեն ժամը 6:30 է: Դպրոց գնալու
ժամանակն է: Արագ արթնացի՛ր: Այլապես, կուշանաս դասից:

Իսկ ես կուշանամ շուկայից»: «Յմմ, ո՛չ: Ես քնած եմ: Ուզում եմ մի քիչ էլ քնել»,- հորանջում է Նարինեն:

Այս իրավիճակը շարունակվում է որոշ ժամանակ. տիկին Մարիամը փորձում է արթնացնել Նարինեին, բայց վերջինս պահանջում է մի քիչ էլ քնել: Միայն ժամը 7-ին Նարինեն վերջապես բարձրանում է անկողնուց: Նախաճաշն արդեն սառել է: Սակայն տիկին Մարիամը չի համարձակվում սաստել Նարինեին, քանի որ վախենում է, որ դուստրը կտխրի ու կմռայլվի, և նրա տրամադրությունը վերջնականապես կփչանա: Տիկին Մարիամը և նրա ամուսինը շատ ջանք էին թափել իրենց միակ երեխային ունենալու համար, և հիմա տիկին Մարիամն անում էր ամեն ինչ Նարինեի բոլոր պահանջները բավարարելու համար: Նա պատկերացում չուներ, թե երբ են վերջապես ավարտվելու իր դստեր՝ դասերից ուշանալու և իր՝ շուկայից ուշանալու արդյունքում առաջացող խնդիրները:

Պատմություն 5

Տիկին Արմինեն միշտ մռայլ ու կոպիտ է վարվում իր երեք երեխաների և իրեն շրջապատող մյուս մարդկանց հետ: Նա զոջում է, որ այդքան շատ երեխա է ունեցել: Նա ամեն օր ստիպված է կատարել բոլոր տնային գործերը և հոգ տանել երեխաների մասին: Նրա երեխաները մշտապես կեղտոտ են, քանի որ նա չի լողացնում նրանց, ինչպես հարկն է: Տունը միշտ թափթփված ու փնթի վիճակում է: Նրա երեք երեխաները՝ երկու, հինգ և յոթ տարեկան, ստիպված են խաղալ միմյանց հետ և հոգ տանել միմյանց մասին: Երբեմն նրանք վիճում ու կռվում են: Երկու կրտսեր երեխաները մշտապես լաց են լինում, իսկ ավագը փորձում է ամեն ինչի մեղքը նրանց վրա բարդել: Տիկին Արմինեն միայն կարող է բղավել նրանց վրա, որպեսզի իրենց հանգիստ պահեն: Նա այնպիսի զգացում ունի, որ իր կյանքը տառապանք է:

Պատմություն 6

«Մայրի՛կ, արի՛ խանութ-խանութ խաղանք, գոնե մեկ րուպե», - աղերսում է Արթուրը՝ մայրիկին փարված: Չնայած Արթուրն ընդամենը չորս տարեկան է, բոլորը Նրան գովաբանում են պարտաճանաչության և հնազանդության համար:

«Խնդրի՛ր քո տիկնիկներին խաղալ քեզ հետ, ես հիմա չափազանց զբաղված եմ», - ասում է մայրը՝ շարունակելով աշխատել համակարգչով:

«Դու միշտ զբաղված ես: Սրանից հետո ես կխաղամ գորշ արջուկի հետ, քեզ հետ այլևս չե՛մ խաղա», - մռայլ պատասխանում է Արթուրը և հեռանում խաղալու իր խաղալիքներով:

Նրա մայրը շարունակում է լուռ աշխատել: Արթուրի համար այս ամենն արդեն սովորական է դարձել: Մայրը միշտ զբաղված է, իսկ հայրն անընդհատ կարդում է: Նա չգիտի ինչ անել, բացի իր խաղալիքներով խաղալուց: Նա երագում է որևէ տեղ գնալ իր ծնողների հետ կամ խաղալ քրոջ հետ սակայն նրա շուրջը բոլորը կարծես մշտապես զբաղված են:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պատմություն 1-ի և 2-ի

Դուք Ձեր երեխային դաստիարակում եք «կամայական» կերպով

Եթե Դուք Ձեր երեխաներին վերաբերվում եք այնպես, ինչպես առաջին պատմվածքի պարոն Արմենը կամ երկրորդ պատմվածքի ուսուցիչը, Ձեր դաստիարակչական մեթոդը կարելի է բնութագրել որպես «կամայական»:

Դրական կողմերը

Որոշ դեպքերում Ձեր երեխան կարող է հնազանդորեն և անմիջապես կատարել Ձեր պահանջները:

Բացասական կողմերը

Ձեր երեխան խաղալու ժամանակ չունի և նրա կյանքում չկա մեկն, ում հետ նա կարող է խոսել:

- Երբ նա մեծանա, նա կախում կունենա ուրիշներից:
- Ձեր երեխայի համար դժվար կլինի սեփական կարծիք կազմել, կամ նա մշտապես կփորձի ընդունել ու գովաբանել մեծահասակների կարծիքը:
- Երեխան կարող է մշտապես ուշադրություն հայցելու բնավորություն ձեռք բերել, որը հատուկ է մարդկանց, ովքեր բավականին խելացի են, սակայն միաժամանակ անինքնավստահ են, վախկոտ և մանկամիտ:
- Երեխան ամեն ինչում կախում կունենա այլոցից և չի կարողանա հասնել ինքնահաստատման և սեփական կյանքի արդյունավետ կերտմանը:

Պատմություն 3-ի

Դուք Ձեր երեխային դաստիարակում եք «ռացիոնալ» կերպով

Տատիկը թոռնուհուն ռացիոնալ է վերաբերվում:

Եթե Դուք կարողանում եք առաջարկություններ անել, և այնուամենայնիվ պատրաստ եք ընդունել Ձեր երեխայի կողմից առաջ քաշվող ողջամիտ այլընտրանքները, Ձեր դաստիարակչական ոճը կարելի է բնութագրել որպես «ռացիոնալ»:

Դրական կողմերը

- Ձեր երեխան կձգտի գիտելիքների և ուսումնառության:
- Նա պատրաստ և ունակ կլինի ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:
- Նա կփորձի օգնել օժանդակության կարիք ունեցող մարդկանց և ընտանիքի անդամներին:
- Նա զգացմունքային տեսանկյունից հավասարակշիռ և հետևողական կլինի:
- Նա կլինի գործնական, իսելացի, կարգապահ, և կկարողանա հարթել վեճերը:
- Նա տարբեր միջավայրերում ինքնավստահ կզգա, կհարգի այլոց կարծիքները, սակայն միաժամանակ ունակ կլինի սեփական կարծիք կազմել:

Բացասական կողմերը

Ռացիոնալությունը հնարավոր է պահպանել միայն Ձեր և Ձեր երեխայի միջև՝ հիերարխիայի վրա հիմնված փոխադարձ հարգանքի առկայության պայմաններում:

Պատմություն 4-ի

Դուք Ձեր երեխային դաստիարակում եք «թույլ» կերպով

Եթե Դուք, ինչպես տիկին Մարիամը, հաճախ ընդունում եք Ձեր երեխայի դասերից ուշանալը, ապա Դուք հակված եք «թույլ» մոտեցում ցուցաբերել Ձեր երեխային նաև այլ հարցերում:

Դրական կողմերը

- Երեխան ազատություն ունի բոլոր հարցերում: Նա կարող է ունենալ բարձր ստեղծագործականություն և երևակայություն:
- Նման ազատությունը վաղ մանկության շրջանում կարող է օգտակար լինել երեխայի համար:

Բացասական կողմերը

- Երեխան կլինի եսակենտրոն, հակված անել միայն այն, ինչ իրեն է հաճելի:
- Ավելի հասուն տարիքում նա կարող է չափազանց եսասեր դառնալ:

Պատմություն 5-ի

Դուք Ձեր երեխային դաստիարակում եք «անզոր» կերպով

Եթե Դուք այնպիսի իրավիճակում եք, ինչպես տիկին Արմինեն, ապա Դուք անզոր եք Ձեր երեխայի առջև: Նա զրկում է Ձեզ

հեղինակությունից, ընդ որում Դուք նպաստում եք այդ իրավիճակին: Ձեզ հատուկ աջակցություն է անհրաժեշտ:

Դրական կողմերը

Երեխաները կարող են սովորել ինքնուրույն ապրել՝ առանց կողմնակի աջակցության կամ նվազագույն աջակցությամբ:

Բացասական կողմերը

- Երեխան հաճախ լալիս է պարզապես շրջապատող մարդկանց ուշադրությունը գրավելու համար:
- Կրթական առավել բարձր մակարդակներում նրանք հաճախ ուսումնառության հետ կապված խնդիրներ են ունենում:
- Երեխան հաճախ դժվարանում է հաղթահարել բարդ իրավիճակները:

Պատմություն 6-ի

Դուք Ձեր երեխային դաստիարակում եք «սառը» ոճով

Եթե Դուք գտնում եք, որ Ձեր աշխատանքն ավելի կարևոր է, քան Ձեր երեխայի կարիքները, ապա Դուք «սառը» ծնող եք, անկախ նրանից, թե որքան եք Դուք սիրում Ձեր երեխային:

Դրական կողմերը

Որոշ դեպքերում նման միջավայրում ապրող երեխաները շատ ինքնուրույն են դառնում:

Բացասական կողմերը

- Երեխան կարող է միայնակ զգալ՝ մշտապես խաղալով ինքն իր հետ:
- Փոխադարձ կարեկցանքի պակասի արդյունքում երեխայի և դաստիարակների միջև փոխըմբռնումը մակերեսային բնույթ է կրում:
- Նույնիսկ ամենանպաստավոր նյութական պայմանների ապահովման դեպքում քիչ հավանական է, որ երեխան կկարողանա զարգացնել իր ողջ ներուժը:

Յարց 2

Ո՞ր տեսակին է պատկանում Ձեր երեխան

1. Երեխան հավասարակշիռ է, նրբազգաց և առանց հակաճառման հետևում է Ձեր պահանջներին

Յայրն ասում է որդուն. «Այսօր կիրակի է, արի՛ մնանք տանը և օգնենք մայրիկին տնային գործերում: Ինձ թվում է՝ վերջերս նա շատ է հոգևում»: «Այո, հայրի՛կ: Այս շաբաթվա տնային աշխատանքներս քիչ են, ե՛կ օգնենք մայրիկին և տունն այնպես կարգի բերենք, որ այն փայլի»:

2. Երեխան երբեմն որոշում է համագործակցել և լավ վարք դրսևորել, սակայն երբեմն էլ անտեսում է Ձեր պահանջները

Տատիկն ասում է թոռնուհուն. «Այսօր կիրակի է, կգա՞մ միասին այցելենք տիկին Աննային: Վաղուց արդեն չենք այցելել մեր հարազատներին»:

«Ո՛չ, ես արդեն պայմանավորվածություն ունեմ ընկերներիս հետ: Ողջ զբաղված շաբաթվա ընթացքում սա իմ միակ ազատ օրն է», - պատասխանում է

«Ինչո՞րով եմ, արի՛ ինձ հետ, միայն կարճ ժամանակով», - համոզում է տատիկը: «Այնուհետև կարող ես գնալ հանդիպելու ընկերներիդ: Ես շատ կտիտեմ, եթե ստիպված լինեմ մենակ գնալ: Բացի այդ, սիրելի՛ն, ինձ քո օգնությունն է հարկավոր ավտոբուս բարձրանալու համար»:

«Բայց..., հմմ: Լավ, ես կարճ ժամանակով դուրս կգամ, ապա կվերադառնամ ու միասին կգնանք այցելության», - ասում է թոռնուհին՝ տեղի տալով տատիկի ցանկությանը:

3. Երեխան երբեք առանց վիճելու չի կատարում Ձեր խնդրանքը, այլ փորձում է պնդել իր տեսակետը

Մայրը դիմում է աղջկան. «Խնդրում եմ աղջի՛կս, օգնիր ինձ ճաշ պատրաստել այսօր»:

«Ինչո՞ւ ես դու միշտ խոհարարությամբ զբաղված: Ես շատ հոգնած եմ ու շատ տնային աշխատանք ունեմ, այնպես որ ժամանակ չունեմ քեզ օգնելու», ասում է դուստրը:

«Այսօր տոն է, դու կարող ես դաս չսովորել այսօր: Դու արդեն մեծ աղջիկ ես և պետք է օգնես ինձ ու սովորես ճաշեր եփել»:

«Ո՛հ, մեկ ուրիշ անգամ, մայրի՛կ, խնդրում եմ: Այսօր ես չեմ ուզում ոչինչ ուտել: Ես շատ հոգնած եմ ինձ զգում»:

4. Երեխան երբեմն արձագանքում է, բայց երբեք անմիջապես չի հետևում Ձեր պահանջներին

Հայրը զրուցում է դստեր հետ. «Դու պետք է սեղանը հավաքես և ափսեները վանաս ճաշից անմիջապես հետո: Շուրջն այսպես թափթփված մի՛ թող»:

«Այո», - պատասխանում է նրա դուստրը, շարունակելով հեռուստացույց դիտել: Հայրը մեկ վայրկյան թերթ է կարդում: Տեսնելով, որ դուստրը դեռ հեռուստացույց է դիտում, նա հիշեցնում է. «Դու դեռ չես լվացել ափսեները, այնպես չէ՞»:

«Դեռ ոչ: Թույլ տուր մեկ րոպե այս տեսահոլովակը դիտեմ»:

Երրորդ անգամ հայրը սկսում է ձայնը բարձրացնել.

«Ես մի քանի անգամ քեզ հիշեցրի: Ինչո՞ւ դու երբեք չես անում այն, ինչ ես խնդրում եմ»:

Աղջիկը վերջապես տեղից վեր է կենում և վանում ափսեները՝ շարունակելով աչքի ծայրով հետևել հեռուստացույցին:

5. Երեխան միշտ խոստանում է որևէ բան անել, բայց իրականում երբեք չի կատարում խոստումը

Ուսուցիչը հանդիմանում է աշակերտին. «Արթուր, դու նորից տևային աշխատանքը չես կատարել, դու դասեր ես բաց թողել և երեք անգամ գրանցվել ես մատյանում դասի ժամանակ խոսելու համար»:

«Ուսուցիչ, ներեցե՞ք ինձ, բայց առաջին անգամ իմ հեծանիվն էր փչացել, իսկ հաջորդ անգամ ես երթևեկության խցանման մեջ էի ընկել, այդ իսկ պատճառով էլ ես չհասցրեցի ժամանակին դպրոց հասնել և բաց թողեցի գրականությունը: Ինչ վերաբերվում է իմ տևային աշխատանքին, երեկ ես չկարողացա այն կատարել, քանի որ ստիպված էի ինսամել իմ հիվանդ մայրիկին: Խոստանում եմ այլևս չկրկնել այս սխալները», - բացատրում է Արթուրը:

«Դու բազմիցս ներողություն ես խնդրել ինձանից և խոստացել փոխվել, սակայն դու շարունակում ես կրկնել նույն զանցանքները: Ցավում եմ, բայց դու չափազանց հաճախ ես խախտում դպրոցի կանոնները: Ասա ծնողներիդ, որ վաղը գան ինձ տեսնելու»:

Դուք կարող եք գտնել, որ Ձեր երեխան յուրաքանչյուր պատմությունից մեկ կամ մի քանի հատկանիշ ունի և լիարժեք կերպով չի պատկանում այս տեսակներից և ոչ մեկին, քանի որ չկան բացարձակ նույնական երկու երեխա, նույնիսկ եթե նրանք երկվորյակ քույրեր կամ եղբայրներ են:

Հարց 3

Ինչու՞ են երեխաները ծնողներին սյարդայնացնող վարք դրսևորում

1. Դավիթն ութ տարեկան է, Նրա քույրը՝ մեկ տարեկան: Նրա ընտանիքի անդամները որպես կանոն փոքրիկ քրոջն ավելի մեծ ուշադրություն են տրամադրում, քան նրան: Երբ շուրջը շատ մարդ կա, Դավիթը հաճախ դիտավորյալ ընկնում ու վնասվում է կամ բարձրաձայն լաց է լինում: Չնայած նա հաճախ պատժվում է դրա համար, նա միևնույն է շարունակում է դա անել: Նա մշտապես բախվում է պատին կամ պառկում հատակին ստիպելով ավագներին ավելի շատ ուշադրություն դարձնել իր վրա:

Երեխան ուշադրություն է փնտրում և ցանկանում, որպեսզի մարդիկ հաշվի առնեն իր կարիքները:

2. Երբ մայրիկը վիրավորում է Արմինեին, վերջինս խոժոռված գնում է իր սենյակ և աղմուկով փակում դուռը: Երեկոյան նա հրաժարվում է ճաշել անտեսելով ծնողների և տատիկի ու պապիկի թախանձագին խնդրանքները: Նրանք ստիպված են պարզապես հանգիստ թողնել նրան: Չնայած Արմինեն ընդամենը յոթ տարեկան է, նա ստիպում է ընտանիքի անդամներին տեղի տալ իր ցանկություններին ու պահանջներին:

Երեխան ցանկանում է հակահարված տալ կամ որևէ վատ բան անել ի պատասխան իրեն հասցված վիրավորանքի:

3. Աննան բանջարեղեն է եփում և դուրս նայում տեսնելու, թե ինչպես են խաղում հարևան երեխաները: Նա ուզում է միանալ նրանց խաղին, բայց մայրիկը ցանկանում է, որպեսզի նա օգնի իրեն, տնային գործերն անել և ճաշ պատրաստել: Ամեն օր դասերից հետո նա Աննային ստիպում է իր տարբեր

հանձնարարությունները կատարել: Աննային դա վշտացնում է, բայց նա այս իրավիճակից խուսափելու ելք չի գտնում: Նա շտապում է կատարել հանձնարարությունները, որպեսզի կարողանա բակ գնալ ընկերների հետ խաղալու: Երբ մայրը կշտամբում է նրան շտապողականության համար, Աննան չարանում է և սկսում հակաճառել մայրիկին:

Երեխան ցանկանում է օգտվել իր իրավունքներից:

4. Վերջերս Լևոնից պահանջեցին ծնողներին հրավիրել դպրոց ուսուցչուհու հետ հանդիպման՝ քննարկելու դասարանում նրա անկարգապահության խնդիրը: Լևոնին դա չի վախեցնում, միևնույն է իր ծնողները չափազանց զբաղված են ուսուցչուհու հետ հանդիպելու համար: Նա շարունակում է բշտել իր դասընկերներին ու բարկացնել ուսուցչուհուն: Որքան ավելի է նա պատժում Լևոնին, այնքան վերջինս ավելի շատ է խախտում կանոնները: Նա ծնողներից փող է գողանում առցանց խաղերի համար, բայց ոչ ոք դա չի նկատում: Երբ ծնողները ստուգում են Լևոնի տետրերն ու տեսնում նրա վատ գնահատականները, նրանք նախազգուշացնում են նրան հետևանքների մասին և դաժանաբար ծեծում նրան: Նրանք ուշադրություն չեն դարձնում նրա արդարացումներին ու բացատրություններին: Լևոնն ավելի ու ավելի միայնակ է զգում իրեն: Նրան թվում է, որ ինչ էլ ինքն անի, լավ թե վատ, ծնողներին միևնույն է դա չի հետաքրքրի:

Երեխան ծնողների և ավագների հոգածության և դաստիարակության կարիքն ունի:

Վերոնիչյալ իրավիճակներում ավագները հաճախ բարկանում և պատժում են երեխաներին:

- Ֆիզիկական պատիժ. ծեծելը ձեռքերով կամ որևէ առարկայով:
- Հուզական պատիժ՝ երեխային վիրավորելը, կշտամբելը, հայիոյելը կամ անտեսելը:

Յարց 4

Ինչու՞ մենք չպետք է պատժենք երեխաներին

1. Պատիժն ազդում է երեխայի զարգացման վրա

- Այն երեխային ցավ ու վիրավորանք է պատճառում:
- Այն ստիպում է երեխային կորցնել իր դեմքը և բացասաբար է ազդում նրա ինքնագնահատականի ու ինքնավստահության վրա:
- Այն կարող է բազմաթիվ հոգեբանական խանգարումների պատճառ դառնալ, որոնք կարող են արտահայտվել այնպիսի վարքաձևերով, ինչպես գիշերային անմիզապահությունը, բուլթը կամ ձեռքը ծծելը, անպատշաճ վարքը կամ անտարբերությունը, դասերից փախչելը կամ ստելը:
- Այն նվազեցնում է երեխայի ինքնահարգանքը:
- Շատ դեպքերում երեխաների մոտ առաջանում են հոգեժողովուրդի գլխացավեր կամ փորացավեր: Բժշկա-հոգեբանական ստուգումները ցույց են տալիս, որ երեխաների մոտ նշանների առկայությունը վկայում է ծնողների կամ խնամատարների վերաբերմունքի արդյունքում առաջացած հոգեբանական տրավմաների մասին:

«Դասարանում խոսելու համար Յայկը երկու ապտակ ստացավ ուսուցչից և ստիպված էր ողջ դասի ընթացքում անկյուն կանգնել: Յաջորդ օրերին ուսուցիչը շարունակում էր հիշեցնել Յայկին նրա օրինազանցության մասին և բողոքել նրա վարքից: Յայկը վախեցած է: Այդ օրվանից ի վեր նա դարձել է խիստ ինքնամիտի, լռակյաց ու երկչոտ և հաճախ լաց է լինում: Առաջին կիսամյակի ընթացքում Յայկը լավ առաջադիմություն ուներ, սակայն տարեվերջին նա ընդամենը միջին դիրքերում է»:

1. Պատիժը բացասաբար է ազդում երեխայի և մեծահասակների փոխհարաբերության վրա

- Այն երեխաների համար վատ օրինակ է ծառայում:
- Այն քայքայում է երեխայի արժեհամակարգը:
- Այն քայքայում է նաև մեծահասակների արժեհամակարգը:
- Այն մեծացնում է լարվածությունը երեխայի և մեծահասակների միջև:

«Ինչի՞ է հավասար յոթը բաժանած երեքի»: Յայրն ավելի ու ավելի է բարձրացնում ձայնը՝ պահանջելով պատասխանել իր հարցին: Այս իրավիճակում Գևորգին դժվար է մտածել:

«Ինչի՞ է հավասար», - հուսահատ մտածում է Գևորգը: «Ինչու՞ ես չեմ կարողանում կատարել այս բաժանումը: Ես սովորաբար հեշտությամբ շատ ավելի բարդ հաշվարկներ եմ կատարում, ինչու՞ ես չեմ կարողանում այս պարզ հարցին պատասխանել»:

«Լավ, ու՞մ է պետք քո սովորելը: Քեզ նման հիմար երեխաները կարող են միայն սեղանի տակ նստել կամ քնել մահճակալի տակ: Յենց հիմա դադարի՞ր դասդ սովորել և նստիր սեղանի տակ», - բղավում է հայրը՝ Գևորգի գլուխը հրելով դեպի սեղանը:

Որքան ավելի բարձր է բղավում հայրը, այնքան Գևորգն ավելի ուժասպառ է զգում իրեն: Նա եռանդագին փորձում է յոթը բաժանել երեքի: Նա կրկին ու կրկին մրթմրթում է. «Յոթը բաժանած երեքի, յոթը բաժանած երեքի»:

«Ինչու՞ է հայրիկն այսքան դաժան վարվում ինձ հետ: Սովորաբար նա բարի է, բայց այնքան սարսափելին է դառնում, երբ ինձ դաս է սովորեցնում: Ես ատում եմ հայրիկին, ես հենց հիմա ատում եմ նրան: Ու ես նույնպես շատ վատն եմ: Ես երբեք ոչինչ լավ չեմ անում: Սա պարզ հաշվարկ է, ինչու՞ ես չեմ կարողանում այն կատարել: Երևի ես իսկապես շատ հիմար եմ»:

Ճիպոտից հրաժարվելն օգնում է երեխային: Սերն ուժեղ է նախատինքից:

3. Պատիժն անօրինական է

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, Յոդված 19

Պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

Յոդված 43: Երեխայի պաշտպանության իրավունքը

Երեխան ունի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրավունք: Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ:

Երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք: Երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում (ընդ որում՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ ծնողական իրավունքները չարաշահելու դեպքերում), երեխան իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու խնամակալության և հոգաբարձության մարմին:

Պաշտոնատար անձինք և այլ քաղաքացիներ, որոնց հայտնի են դարձել երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների դեպքեր, այդ մասին

պետք է հայտնեն երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին: Նման տեղեկություններ ստանալուն պես խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է ձեռնարկի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ:

ՀՀ Օրենք «Երեխաների իրավունքների մասին»

Ընդունվել է 29.05.1996

Հոդված 9: Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:

**ՀՀ Օրենք «Երեխաների իրավունքների մասին»
Ընդունվել է 29.05.1996**

**Հոդված 22. Երեխայի պատվի և արժանապատվության
պաշտպանության իրավունքը**

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության
իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և
հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի
անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող
ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր
պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի
ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու
երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են
փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն
կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ
օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և
ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն
են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված կարգով:

Չարց 5

Ինչու՞ են մարդիկ հավատում, որ երեխաներին կարելի է դաստիարակել պատժի միջոցով

Ֆիզիկական և հուզական պատժի մասին սխալ պատկերացումները գոյություն են ունեցել հազարավոր տարիներ շարունակ՝ փոխանցվելով մի սերնդից մյուսին: Այս սխալ պատկերացումներից են.

- Պատիժը երեխային դաստիարակելու արդյունավետ միջոց է. «Եթե նրանք չեն սովորում, ապա ծեծը նրանց կսովորեցնի»:
- Ավանդական դաստիարակչական մոտեցումը. «Առանց ճիպտի յուրազանցողը կփչացնի երեխային»:
- Կյանքի փիլիսոփայությունը. «Կառավարիր երկաթե բռունցքներով», «Չարգիր նախնիներիդ իմաստությունը»:
- Պատիժը երեխային ցույց է տալիս ծնողների, ուսուցիչների և մեծահասակների ուժն ու հեղինակությունը:
- Միայն պատիժը կօգնի բարձրացնել երեխաների կարգապահությունը և կստիպի նրանց հետևել ծնողների և այլ մեծահասակների հրամաններին. «Երեխաները պետք է տեսանելի լինեն, բայց ոչ լսելի»:
- Պատիժն օգնում է երեխաներին հասկանալ իրենց մեղքը և կենտրոնանալ հետագա զանցանքներից խուսափելու վրա:
- Առանց պատժի երեխաները կփչանան:

Հարց 6

Ինչպե՞ս դաստիարակել երեխաներին առանց ֆիզիկական և հուզական պատժի կիրառման

Փորձե՛ք հետևել այս խորհուրդներին.

1. Եղե՛ք համբերատար

Երբ Դուք զայրացած եք, Ձեր ինքնակառավարումը նվազում է: Եթե կարծում եք, որ Դուք մոտ եք երեխային ծեծելուն կամ ապտակելուն, աշխատե՛ք դուրս գալ իրավիճակից: Չբաղվե՛ք որևէ այլ բանով այնքան ժամանակ, մինչև կվերագտնե՛ք Ձեր ինքնակառավարումը և կկարողանա՛ք հարցին մոտենալ առավել ռացիոնալ կերպով:

Հանգստացե՛ք

Երբեմն Դուք կորցնում եք ինքնակառավարումը արտաքին սթրեսի արդյունքում: Սովորե՛ք ճանաչել նման իրավիճակները և Ձեզ հանգստանալու ժամանակ տվե՛ք: Երբ Դուք ավելի հանգիստ կզգաք, Դուք կկարողանա՛ք իրավիճակին մոտենալ առավել հավասարակշիռ կերպով և կգտնե՛ք ավելի արդյունավետ լուծում, քան երեխային պատժելն է:

Օրինակ. Դուք հապճեպ ճաշկերույթի եք պատրաստվում: Ձեր երեխաները կռվում են: Լսվում է հեռախոսի զանգը: Հանկարծ ավագ երեխան կոտորում է ապուրամանը, Դուք զգում եք, որ Ձեր համբերությունը հատում է և Դուք կորցնում եք ինքնակառավարումը:

Աշխատե՛ք

Հաշվել մինչև տասը, մինչև որևէ բան ասելը: Ետ ու առաջ քայլե՛ք, եթե զգում եք, որ դա կօգնի: Խփե՛ք պատին կամ ոտքով հարվածե՛ք գետնին: Երեխաներին տեղավորե՛ք որևէ ապահով տարածքում և հեռացե՛ք մի քանի րոպեով կամ նույնիսկ մի քանի

ժամով, մինչև որ կզգաք, որ վերագտնում եք ինքնակա-
ռավարումը: Երեխաներին ապտակելու փոխարեն ծափ տվեք:

2. Հոգ տարեք ինքներդ Ձեր մասին

Շատ ծնողներ ծեծում են իրենց երեխաներին, քանի որ
գերհոգնած ու մշտական վազքի մեջ են: Ձեր գայրույթն ու սթրեսը
երեխայի վրա թափելու փոխարեն ժամանակ հատկացրեք ինք-
ներդ Ձեր մասին հոգալու համար՝ զբաղվեք մարմնա-
մարզությամբ, կարդացեք, վազեք կամ արեք ցանկացած բան, որը
կօզնի Ձեզ լիցքաթափվել: Հանգստանալն ու թարմանալը կօզնի
Ձեզ առավել արագ ազատվել վատ տրամադրությունից:

3. Եղեք մեղմ, սակայն հաստատակամ

Երեխաներին ծեծելու կամ կշտամբելու առիթներից մեկն այն է, որ
երեխաները ժամանակ առ ժամանակ մոռանում կամ
հրաժարվում են հետևել ծնողների կամ խնամատարների
պահանջներին: Ի վերջո մեծահասակը հասնում է ֆիզիկական
պատիժ կիրառելուն՝ ձգտելով այս միջոցով իր ասելիքը հասցնել
երեխային:

Ձեր երեխային հարվածելու կամ ծեծելու փոխարեն փորձեք մեղմ,
սակայն հաստատակամ ձևով խոսել նրա հետ: Նայեք ուղիղ նրա
աչքերին և քնքուշ բռնեք նրա ձեռքը՝ համոզվելու համար, որ նրա
ուշադիր լսում է Ձեզ: Հստակ կրկնեք Ձեր խնդրանքը, օրինակ.
«Նորից եմ կրկնում, մայրիկն ուզում է, որ դու երբեք չընդհատես,
երբ ես խոսում եմ հյուրի հետ»:

4. Այլընտրանք առաջակեք

Ծեծելու կամ հանդիմանելու փոխարեն Ձեր երեխային այլ-
ընտրանք առաջարկեք: Օրինակ, երբ Ձեր փոքրիկը սեղանի
շուրջ նստած խաղ է անում սնունդի հետ, Դուք կարող եք ասել-
«Կամ դադարիր՝ ձեռք տալ սնունդին կամ անմիջապես հեռացիր
սեղանի մոտից»: Եթե երեխան շարունակի, Դուք պետք է մեղմ,
սակայն հաստատակամ կերպով նրան հեռացնեք սեղանի մոտից՝
հստակ բացատրելով, որ «սնունդը բոլորի համար է: Դու կարող

ես վերադառնալ սեղանի մոտ, երբ պատրաստ կլինես ուտել և ոչ թե խաղալ սնունդով»:

5. Օգնե՛ք երեխային հասկանալ պատճառահետևանքային կապերը

Երեխան միտումնավոր կոտորում է հարևանի ցանկապատը: Դիտարկե՛ք հետևյալ երկու լուծումները.

Լուծում 1

Դուք ծեծում եք երեխային: Նա կհասկանա, որ լուրջ սխալ է գործել: Ապագայում, եթե նա պատահաբար վնասի այլոց սեփականությունը, նա կփորձի թաքցնել իր զանցանքը, մեղադրել այլ մարդկանց, կամ նույնիսկ ստել՝ խուսափելու համար պատժից: Ավելին, նա համոզված կլինի, որ վնասը վերականգնելու ոչ մի միջոց չկա: Երեխան կարող է նաև զայրանալ ու փորձել վրեժ լուծել մշտապես վատ վարք դրսևորելու և իր գործողությունները թաքցնելու միջոցով:

Լուծում 2

Աշխատե՛ք երեխային լուծման մի քանի տարբերակ առաջարկել՝ խոսել հարևանի հետ և ներողություն հայցել ցանկապատը վնասելու համար, վերանորոգել վնասված ցանկապատը, օգնել հարևանին ցանկապատի վերականգնման աշխատանքներում: Նման մոտեցումը կօգնի երեխային հասկանալ, որ պետք է խուսափել այլ մարդկանց սեփականությանը միտումնավոր կամ ակամա վնաս պատճառելուց, սակայն եթե դա տեղի է ունեցել, նրանք կարող են փոխհատուցել՝ ներողություն հայցելով և փորձելով տարբեր եղանակներով վերացնել վնասը:

Ի՞նչ դասեր կքաղի երեխան

Բոլորն էլ սխալներ են գործում, սակայն անկախ ամեն ինչից նրանք կարող են պահպանել շրջապատի մարդկանց հարգանքը: Գործած զանցանքի համար անհրաժեշտ է անկեղծորեն ներողություն հայցել: Սա կօգնի խուսափել բախումներից և հասնել կողմերի միջև փոխըմբռնման և անկեղծության:

6. Համաձայնության եկեք և պահեք Ձեր խոստումները

Երեխան կարող է մոռանալ կամ խուսափել իր խոստումները կատարելուց: Երբ նման բան է պատահում, մեծահասակները հաճախ գայրանում են և պատժում երեխային: Դիտարկենք հետևյալ իրավիճակը. Ձեր երեխան այնքան է տարված ինտերնետային խաղերով, որ հաճախ թերանում է տնային աշխատանքում:

Լուծում 1

Դուք բարկացած պահում եք համակարգիչը և արգելում Ձեր երեխային օգտվել ինտերնետից: Նման դեպքում Ձեր երեխան կարող է ի վերջո դրամ գողանալ ձեզանից և խաղալ ինտերնետային սրճարաններում:

Լուծում 2

Դուք իրավիճակը քննարկում եք Ձեր երեխայի հետ և համաձայնության գալիս ինտերնետային խաղեր խաղալու գրաֆիկի շուրջ: Օրինակ, երեխային կարող եք թույլատրել ինտերնետային խաղեր խաղալ օրական մեկ ժամ՝ տնային աշխատանքը և վարժությունները լիարժեք կատարելուց հետո: Եթե երեխան խախտում է համաձայնությունը, Դուք կարող եք պահել համակարգիչը և վերադարձնել այն միայն երբ նա ավարտում է տնային աշխատանքները, կամ երբ այլ համաձայնության եք գալիս:

Ի՞նչ դասեր կթաղի երեխան

Երեխան հասկանում է, որ իրեն հարգում են և վերաբերվում հավասարի պես, քանի որ իր հետ համաձայնություն են կնքում: Երեխան հստակ հասկանում է համաձայնության էությունը և գիտի այն խախտելու հետևանքները: Նա գիտի, թե ինչպիսին կարող են լինել համաձայնությանը չհետևելու հետևանքներն իր համար: Նա նաև կարողանում է վերահամաձայնության գալ և վերականգնել շրջապատի վստահությունն իր նկատմամբ:

7. Խուսափե՞ք բախումներից

Երբ երեխան հանդուզն պահվածք է դրսևորում մեծահասակների նկատմամբ, հեշտ է համբերությունը կորցնել, զայրանալ ու ապտակել նրան: Նման դեպքերում առավել լուրջ բախումից խուսափելու համար, փորձե՞ք կիրառել խորհուրդ 1-ը /եղե՛ք համբերատար/ կամ խորհուրդ 3-ը /եղե՛ք մեղմ, սակայն հաստատակամ/: Ձեր զայրույթն ու հիասթափությունը ցրելու համար Դուք պետք է պրոակտիվ կերպով կանխե՞ք բախումը կամ վեճը՝ ցույց տալով երեխային Ձեր հաստատուն որոշումը: Օրինակ, Դուք կարող եք ասել. «Ես հիմա դուրս կգամ և կվերադառնամ միայն, երբ դու ի վիճակի լինես առավել քաղաքավարի խոսել ինձ հետ»:

8. Գործե՞ք հաստատակամ

Եթե երեխան վերցնում է այն, ինչը իրենը չի, կամ ինչը չի կարելի վերցնել առանց Ձեր թույլտվությունը ստանալու, Դուք պետք է հաստատապես ու խստորեն պահանջե՞ք նրանից վերադարձնել այն: Դուք նաև կարող եք երեխային տալ այլ՝ առավել հարմար խաղալիք՝ ասելով «Մյուս առարկայով դու կարող ես խաղալ, երբ մեծանաս», կամ «Մյուս առարկայով դու կարող ես խաղալ միայն թույլտվություն ստանալուց հետո»: Դուք կարող եք ստիպված լինել երկար ժամանակ ծախսել, եթե երեխան շարունակի համառել նախորդ առարկան ստանալու պահանջով: Սակայն աստիճանաբար երեխան շատ բան կսովորի, հատկապես՝ հարգանքով վերաբերվել այլ մարդկանց իրերին:

9. Նախօրոք զգուշացրե՞ք

Որոշ երեխաների կարող է զայրացնել այն, որ նրանց չէին զգուշացրել նոր իրավիճակի մասին: Նրանք կարող են զգացում ունենալ, որ իրենք ընտրություն չունեն, և որ իրենց հարկադրաբար են դրել այդ իրավիճակի մեջ: Օրինակ, փոխանակ երեխայից պահանջե՞ք անմիջապես պատրաստվել տուն գնալու, ասե՞ք նրան, որ Դուք տուն եք գնալու հիևզ րոպեից: Սա երեխային հնարավորություն կտա ավարտին հասցնել կիսատ խաղը և պատրաստ լինել Ձեզ հետ միասին դուրս գալ և ուղևորվել տուն:

Երեխաներին համագործակցության մղելու համար մեծահասակները պետք է հաղորդեն նրանց հիմնական կանոնները հետևյալ կերպով.

Երբ դու

(Հստակ նշեք երեխայի վարքը)

Ես/մենք (ծնողները, ուսուցիչները, եղբայրը/քույրը/ զգում եմ/ենք.. (ներկայացրեք ձեր զգացումը, օրինակ՝ երջանիկ/տխուր/զայրացած/ անհանգիստ)

քանի որ

(բացատրեք երեխայի վարքագծի հետևանքները և համապատասխան մտքերն ու զգացումները)

Ես/մենք /ծնողները, ուսուցիչները, եղբայրը/քույրը/ ուզում ենք, որպեսզի դու

(հստակ նշեք այն վարքաձևերը, որոնք համապատասխանում են ձեր պահանջներին)

Վերոհիշյալ խորհուրդներին հետևելը կօգնի Ձեր երեխային.

- Փոխել անպատշաճ վարքը և վերաբերմունքը:
- Լինել հաճելի և հարգված:
- Հասկանալ այլոց ցանկություններն ու զգացմունքները:
- Հարաբերություններ ստեղծել, կիսվել մարդկանց հետ և օգնել նրանց:

Յարց 7

Ինչպե՞ս վերաբերվել երեխաներին ըստ նրանց տարիքային առանձնահատկությունների

1. Նորածին երեխաներ (0-ից 12 ամսական)

Յոգեբանական առանձնահատկությունները

- Վստահությունը ծնողների կամ խնամատարների նկատմամբ:
- Խնամատարների հետ ապահով հարաբերությունների ստեղծումը:
- Ապահովության և վստահության զգացում զարգացնելու համար, երեխաներին անհրաժեշտ է ծնողներից կամ խնամատարներից ստանալ սեր, հոգածություն և սերտ կոնտակտ /օրինակ՝ գրկել, գգվել, խոսել, ժպտալ, փայփայել/:

Իրավիճակ

Ճաշ եփելիս Լուսինեն լսում է երեխայի լացը, արագ վազում է սենյակ և գրկում մանկիկին: Նա շոյում է երեխային ու հանգստացնում «Շ222, լաց մի՛ եղիր, սիրելի՜ս, հանգստացի՛ր և թո՛ւյլ տուր ճաշ եփեմ»: Չորս ամսական երեխան շարունակում է լաց լինել: Լուսինեն չափազանց դյուրագրգիռ է: Անզոր լինելով տղային հանգստացնել՝ նա ճչում է. «Դադարի՛ր, դադարի՛ր հենց հիմա»: Տղան վախեցած է և լալիս է էլ ավելի բարձր: Բարեբախտաբար, հենց այդ պահին տուն է վերադառնում ամուսինը: Լուսինեն երեխային հանձնում է ամուսնուն և ասում. «Դու՝ հոգ տար մեր երեխայի մասին, իսկ ես՝ այսօրվա ճաշի»:

Ամուսինը մեղմորեն գրկում է տղային ու շնչում. «Օհ, իմ փոքրիկ, հրաշալի տղա, ինչո՞ւ ես այդքան լալիս: Մայրիկը բարկացե՞լ է քեզ վրա: Օհ, հայրիկը քեզ շատ է սիրում, էլ լաց մի՛ լինիր»:

Լսելով մեղմ շնչոցը մանկիկը աստիճանաբար դադարում է լաց լինել և, աչքերը բարձրացնելով, հայացքը սևեռում է հոր վրա:

«Իսկ այժմ ե՛կ տեսնենք: Օհ, դու թրջել ես տակդիրդ: Հանգիստ պառկի՛ր, մինչ ես կփոխեմ այն, որդի՛ն»: Նա նրբորեն երեխային ցած է դնում մահճակալին և փոխում տակդիրը: Երեխան երջանիկ ժպտում է:

Յիշեցե՛ք

- Դուք պետք է լսեք Ձեր երեխային, փորձեք հասկանալ, թե նա ինչի կարիք ունի և տալ նրան այն, ինչ անհրաժեշտ է:
- Եթե երեխան բացասաբար է արձագանքում, փորձեք հանգստացնել նրան:
- Ավելի լավ է մանկիկին սիրել, հոգ տանել և փառաբանել, քան ծեծել և հանդիմանել:

2. Նախադպրոցական տարիքի երեխաներ (1-ից 6 տարեկան)

Յոգեբանական առանձնահատկությունները

- Այս փուլում երեխաներն ուզում են շատ բաներ անել ինքնուրույն, օրինակ՝ խոսել, քայլել, զուգարան գնալ, հագնվել, ուտել: Նրանք նաև հաճույքով ուսումնասիրում են շրջակա աշխարհը, սակայն դեռևս չունեն անհրաժեշտ հմտություններ:
- Նրանք հակված են եսակենտրոնության, նկատում են միայն իրենց և սեփական ցանկությունները: Նրանք կարող են «եսասեր» թվալ և հաճախ են ասում «ոչ» պարզապես սեփական հեղինակությունը զգալու համար:

Քանի որ նրանք հաճախ ընդդիմանում են մեծահասակների կամքին, նրանք կարող են թվալ «անխառնակառ», «երես առած» կամ «անհնազանդ»:

- Նրանք սիրում են ուսումնասիրել շրջակա աշխարհը, տարբեր բաներ անել և ընդօրինակել մեծահասակների սովորությունները: Շրջապատի ուսումնասիրության ընթացքում նրանք փորձում են սեփական նախաձեռնություններ ձեռնարկել կամ փորձեր կատարել, սակայն, հաշվի առնելով հմտությունների պակասը, դրանք միշտ չէ, որ հաջողվում են: Երեխայի զարգացման այս փուլում Դուք կարող եք ցանկություն ունենալ պատժել նրան իր ձախողումների, օրինակ՝ առարկաները կոտրելու համար:
- Նրանք սիրում են ուշադրություն գրավել:
- Երեխայի համակողմանի զարգացման համար կարևոր է խաղը և զվարճանքը:
- Աստիճանաբար զարգանում է հարմարվելու ունակությունը: Երեխան շրջապատող մարդկանցից դրական վարվելակերպ է սովորում:
- Սրընթաց զարգանում են լեզվական ունակությունները:
- Այս փուլում երեխաները շատ զգայուն են սխալներ գործելու նկատմամբ: Նրանց գործած սխալներին ծեծով կամ կշտամբանքով արձագանքելը կարող է հեշտությամբ հոգեբանական, ինչպես նաև ֆիզիկական ցավի կամ վսասի պատճառ դառնալ:

Որոշ իրավիճակներ, որոնք կարող են զայրացնել Ձեզ, և դրական դաստիարակչական մեթոդներով դրանց լուծման տարբերակները:

Ձեր երեխան հրաժարվում է մանկապարտեզ կամ

նախակրթարան գնալ: Թվում է, թե նա մշտապես ցանկանում է հակառակվել այն ամենին, ինչ դուք եք ուզում, որ նա անի:

Հիմնական պատճառները ներառում են՝ երեխան չի սիրում կամ վախենում է ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից մանկապարտեզում կամ նախակրթարանում կամ դրա ճանապարհին: Չրուցեք

երեխայի հետ և փորձեք հասկանալ իրական պատճառը: Մատնացույց արեք երեխային նախակրթարանում/մանկապարտեզում նրան սպասող զվարճանքները, ինչպիսիք են ընկերների հետ խաղալը, դաստիարակների հետ պարելն ու երգելը և խաղալիքները: Գովաբանեք Ձեր երեխային բարի և հնազանդ լինելու և մարդկանց մշտապես ուրախացնելու համար:

Բացատրեք Ձեր երեխային, որ մեծահասակները պետք է աշխատեն, իսկ լավ երեխաները պետք է հաճախեն մանկապարտեզ կամ նախակրթարան: Օգնեք նրան հասկանալ, որ պատրաստակամորեն նախակրթարան հաճախելով նա ուրախացնում է ծնողներին, տատիկներին ու պապիկներին, ու նրանք երեխային է՛լ ավելի շատ են սիրում:

Երեխան հրաժարվում է ուտել կամ դեղը խմել

Փորձեք բացատրել, որ նրան անհրաժեշտ է սնվել, որպեսզի մեծանա, դպրոց գնա և լավ բաներ կարողանա անել: Եթե երեխան հիվանդ է, բացատրեք, որ անհրաժեշտ է դեղը խմել, որպեսզի նա շուտ առողջանա և գնա նախակրթարան կամ բակում խաղալու: Դուք կարող եք նաև «բժիշկ-հիվանդ» խաղալ, հնարավորություն տալով երեխային գնել և դեղեր խմեցնել տիկնիկներին և արջուկներին: Երբ երեխան ի վերջո ուտի իր ճաշը կամ խմի իր դեղը, չմոռանաք խրախուսել և գովել նրան դրա համար:

Երեխան համառ է և հաճախ հրաժարվում է հետևել ծնողների կամ ինսամատարների հրահանգներին: Հաճախ, երբ Դուք փորձում եք ստիպել երեխային որևէ բան անել, օրինակ՝ ողջունել տատիկին և պապիկին, երեխան կարող է կտրականապես հրաժարվել: Փորձեք անտեսել նրա վատ վարքը, սպասեք մինչ այն պահը, երբ նա ուրախ խաղալիս կլինի այլ մարդկանց հետ, և ասեք նրան նման մի բան. «Իմ լավ երեխա՛, դու մոռացար ողջունել տատիկին և պապիկին: Նրանք երևի շատ են վշտացել: Խնդրում եմ հիմա գնա և ողջունի՛ր նրանց»:

Երեխան վնասում կամ կոտորում է որևէ առարկա:

Մի մտածեք, որ երեխասն չափազանց փոքր է Ձեր բացատրությունը հասկանալու համար: Օրինակ, երբ նա վնասում կամ կոտորում է բաժակները, բացատրեք նրան, որ այժմ դուք ըմպելիքի համար բաժակ չունեք, և ստիպված եք գումար ծախսել նոր բաժակներ գնելու համար, որը կնշանակի, որ դուք պակաս գումար կունենաք սնունդ և խաղալիքներ գնելու համար: Այ իսկ պատճառով էլ, հաջորդ անգամ նա ավելի զգույշ պետք է լինի:

Երեխան ուզում է իր ընկերոջ խաղալիքները վերցնել:

Փորձեք բացատրել երեխային, որ նա չպետք է ընկերոջ խաղալիքները վերցնի առանց ընկերոջ համաձայնության: Նմանապես բացատրեք, որ շատ լավ է, երբ երեխան թույլ է տալիս ընկերներին խաղալ իր խաղալիքներով կամ համաձայնում է միասին խաղալ դրանցով: Երբ բոլոր երեխաներն ավարտեն խաղը, նրանք պետք է յուրաքանչյուր խաղալիքը վերադարձնեն օրինական տիրոջը: Եթե Ձեր երեխան հնազանդվում է, պարզևատրեք նրան իր սիրած խաղալիքով:

Որոշ դեպքերում, չնայած բոլոր բացատրություններին, Ձեր երեխան կշարունակի համառորեն վերցնել ընկերոջ խաղալիքներն առանց վերջինիս համաձայնության: Այդ դեպքում Դուք պետք է քնքշորեն, բայց հաստատակամորեն պահանջեք, որպեսզի երեխան վերադարձնի խաղալիքը: Եթե Դուք թույլ տաք Ձեր երեխային պահել այդ խաղալիքը, նա կսովորի, որ այդ կերպ կարելի է ինչ-որ բանի համնել, և հաջորդ անգամ ավելի դժվար կլինի ստիպել նրան ենթարկվել Ձեզ: Արդյունքում երեխան կարող է չափազանց եսասեր դառնալ:

Երեխան ծեծում է ընկերոջը:

Բացատրեք երեխային, որ շատ վատ է մարդկանց ծեծելը: Հարցրեք, թե ինչ է նա զգում, երբ իր ընկերոջը տեսնում է վիրավորված լաց լինելիս: Իսկ լա՛վ կլինի, եթե ընկերն ի պատասխան նրան ծեծի: Ընկերները պետք է սիրեն միմյանց, հոգ տանեն և խաղան միմյանց և այլ երեխաների հետ: Բացատրեք

նաև, որ եթե նա չհետևի Ձեր խորհրդին, ոչ ոք այլևս չի ցանկանա խաղալ նրա հետ:

Չիշեցե՛ք

- Լսե՛ք երեխային և փորձե՛ք նրա խոսքի, ժեստերի կամ դիմախաղի միջոցով հասկանալ նրա կարիքները:
- Պարզ բացատրե՛ք, որպեսզի երեխան իմանա, թե որն է ճիշտը, իսկ որը՝ սխալը:
- Չեշտությամբ տեղի մի՛ տվե՛ք Ձեր երեխայի պահանջներին: Մեղմորեն, բայց հաստատակամորեն արտահայտե՛ք Ձեր դժգոհությունը նրա վատ վարքի նկատմամբ և հստակ բացատրե՛ք, թե ինչպես է պետք վարվել հետագայում:
- Խիստ եղե՛ք Ձեր երեխայի նկատմամբ, բայց մի՛ բղավե՛ք, մի՛ կշտամբե՛ք և մի՛ ծեծե՛ք նրան:
- Գովե՛ք և խրախուսե՛ք երեխային, երբ նա լավ վարք է դրսևորում:

3. Տարրական դպրոցական տարիքի երեխաներ (6-ից 11 տարեկան)

Չոգեբանական առանձնահատկությունները

- Խաղային գործունեությունից անցե՛ք ուսումնականին: Այս փուլում երեխաները ընտելանում են դպրոցական միջավայրին: Պատժվելու դեպքում նրանք կարող են դառնալ ինքնամփոփ, ունենալ անապահովության զգացում, հետաքրքրության և մոտիվացիայի անկում ուսումնառության նկատմամբ կամ նույնիսկ դադարել դպրոց հաճախել:
- Ծնողները և ուսուցիչները մեծ ազդեցություն ունեն երեխայի անհատականության զարգացման վրա: Երեխաները աջակցության և խրախուսման կարիք ունեն:
- Սկսում են զարգանալ երեխաների սոցիալական հմտությունները, սակայն դրանք դեռ լիարժեք կազմավորված չեն:

- Այս փուլում շատ կարևոր է ընկերությունը երեխաների միջև:
- Ընդհանուր առմամբ սա միանգամայն կայուն զարգացման փուլ է:

Իրավիճակ 1

Չինգերորդ դասն ավարտվում է 16:30-ին, սակայն տիկին Կարինեի տղան տուն է վերադառնում միայն 17:30: Մայրն անհանգստացած հարցնում է. «Ինչու՞ այսքան ուշ վերադարձար»: Տիգրանը փոքրիկ տղան, առանց պատասխանելու լուռ տուն է մտնում: Տիկին Կարինեն գնում է նրա հետևից և սպասում պատասխանի: Վախեցած նայելով մայրիկին՝ Տիգրանը կախում է գլուխն ու ցածրաձայն պատասխանում. «Ես դպրոցում կռվեցի ընկերներիս հետ, և ուսուցիչը պահանջեց, որպեսզի ես խոստովանական նամակ գրեմ և ծնողներիս խնդրեմ ստորագրել այն»:

Չնայած տիկին Կարինեն շատ հոգևած է և բարկացած, որ տղան ուշ է տուն վերադարձել, նա փորձում է խուսափել անմիջապես նրան հանդիմանելուց: Նա մեղմորեն հարցնում է. «Շատ լավ է, որ դու ճշմարտությունն ես ասում: Իսկ այժմ պատմիր ինձ ողջ իրողությունը, սիրելիս»:

Տիգրանը փոքր-ինչ ոգևորվում է՝ տեսնելով՝

որ մայրը չի բարկանում: Նա համարձակորեն պատմում է տեղի ունեցածը. նրա ընկերները ծաղրում էին նրան՝ իրենց դասարանում սովորող մի աղջկա հետ կապված: Դա նրան բարկացրեց, և նա հարձակվեց ամենամեծախոս տղայի վրա:

Լսելով պատմությունը՝ տիկին Կարինեն հազիվ էր զսպում ծիծաղը. նրա երեխան նույն խնդիրն ուներ, որն անցյալում իրեն էլ էր տանջում: Նա փորձում է խիստ հնչել՝ հարցնելով. «Նա ծաղրում էր քեզ, դու ծեծեցիր նրան, իսկ ուսուցիչը պատժեց երկուսիդ էլ: Քեզ դու՞ր է գալիս այս ամենը»: «Ես գիտեմ, որ սխալ

Եր նրան ծեծելը: Բայց ես այնքան զայրացած էի: Ես վախենում էի, որ դու և ուսուցիչն ինձ կմեղադրեք: Տուն գալու ճանապարհին ես տենդագին փորձում էի հասկանալ, թե ինչպես եմ քո ստորագրությունը ստանալու: Իմ ընկերներից մեկն ինձ ասաց, որ լավ կլինի կեղծել ստորագրությունդ»:

«Այդ դեպքում ինչու՞ ինձ պատմեցիր ողջ ճշմարտությունը»:

«Դե, դու ինձ չծեծեցիր ուշ տուն գալու համար: Դու շատ մեղմ հարցրեցիր, թե ինչ էր պատահել: Դու ուշադիր լսեցիր ինձ: Ինչու՞ պետք է ես ստեմ քեզ»:

Գրկելով տղային՝ տիկին Կարինեն քնքշորեն ասաց. «Քո ընկերները չպետք է քեզ ծաղրեն: Սակայն դու պետք է պարզապես նրանց հստակ ասեիր, որ քեզ դա դուր չի գալիս: Եթե նրանք շարունակեին ծաղրել քեզ, դու կարող էիր ուսուցչիդ ասել այդ մասին: Ընկերոջդ ծեծելը սխալ ելք էր: Եվ ես քեզ կպատժեի դրա համար: Սակայն, հաշվի առնելով, որ դու շատ ազնիվ գտնվեցիր ու պատմեցիր ինձ ողջ իրողությունը, ես քեզ ներում եմ: Ես վստահ եմ, որ դու նման սխալ այլևս թույլ չես տա, այնպես չէ՞, սիրելիս»:

«Այո՛, մայրի՛կ: Ներիր ինձ: Ես այլևս երբեք չեմ ծեծի իմ ընկերներին»:

Իրավիճակ 2

Տասներկուամյա աղջիկը զանգահարում է Երեխաների օժանդակության թեժ գիծ: Նա լաց է լինում և պատմում, որ Նախորդ օրը նա, խաղով տարված, չի կատարել իր տնային աշխատանքը: Ուսուցիչը ստիպել էր նրան բացատրական նամակ գրել և տալ այն ծնողներին՝ ստորագրելու: Ծնողները նրան հանդիմանել էին՝ ասելով, որ նա անհնազանդ երեխա է և իրենց բոլորովին չի սիրում: Դա նրան անչափ տխրեցնում էր: Թեժ գծի խորհրդատուն լսում է նրա պատմությունն ու փորձում մխիթարել և սիրտ տալ նրան: Նա վստահեցնում է աղջկան, որ նրա ծնողները սիրում և հոգում են նրա մասին: Նա գիտի, որ սխալ է վարվել: Նա կցանկանար, որպեսզի ծնողներն էլ իմանային, թե նա

ինչ է զգում, և փորձեին հասկանալ նրան: Նա անհնազանդ չէ, ինչպես ծնողներն են պնդում: Խորհրդատուն փորձում է օգնել աղջկան իրավիճակին մոտենալ ծնողների տեսանկյունից, և բացատրել, որ նրանց բառերը բխում են միայն դատեր նկատմամբ նրանց անհանգստությունից և ոչ թե նրա նկատմամբ բացասական վերաբերմունքից: Նա նաև զրուցում է աղջկա հետ նրա ապագա պլանների մասին, և ցույց տալիս նրան, թե որքան կարևոր է ուսումնա՝ իր ցանկություններն իրականացնելու համար: Այժմ նա հիացած է և խոստանում է լավ սովորել և այլևս երբեք թույլ չտալ, որ խաղը խանգարի իր ուսումնառությամբ:

Հիշեցե՛ք

- Սիրե՛ք, գովաբանե՛ք և խրախուսե՛ք երեխային:
- Թե՛ գովել ու պարգևատրել, և թե՛ քննադատել ու դաս տալ երեխային անհրաժեշտ է հետևողականորեն և ժամանակին:
- Աշխատե՛ք երեխայի հետ՝ փորձելով հասնել երկու կողմերի համար ընդունելի փոխզիջումների: Մի՛ ծեծե՛ք և մի՛ ստորացրե՛ք Ձեր երեխային:

4. Կրտսեր միջնակարգ դպրոցական տարիքի երեխաներ (12-ից 15 տարեկան)

Հոգեբանական առանձնահատկությունները

- Պուբերտատ շրջանը. հորմոնալ փոփոխություններ, որոնք ազդում են երեխայի հոգեվիճակի ու բնավորության վրա: Երեխաները կարող են դառնալ ավելի զգացմունքային և ունենալ տրամադրության հաճախակի փոփոխություններ: Նրանք կարող են արագ ոգևորվել, բայց և նույնքան արագ ձանձրանալ ու հուսահատվել: Նրանք անսպասելի պոռթկում են, անսպասելի ուրախանում, բայց և անսպասելի տխրում և խոժոռվում:
- Երեխաները սրընթաց զարգացում են ապրում բարոյական և սոցիալական տեսանկյունից: Շատ

կարևոր է շրջապատված լինել նույն տարիքի ընկերներով. երբեմն Նրանք ավելի մեծ ազդեցություն են ունենում երեխայի զարգացման վրա, քան ծնողները կամ ուսուցիչները:

- Երեխաները ցանկանում են ներկայացնել իրենց որպես անհատականություն և ի ցույց դնել իրենց ուժը: Նրանք հաճախ հակամարտության մեջ են մտնում մեծահասակների հետ ձգտելով ցուցադրել իրենց անկախությունն ու ազատամտությունը: Նրանք շարունակաբար մարտահրավեր են նետում մեծահասակների հեղինակությանը, օրինակ՝ վիճում կամ պատասխաններ են տալիս:
- Նրանք այլևս «երեխաներ» չեն, սակայն դեռևս «չափահաս» էլ չեն: Նրանք ցանկանում են ցույց տալ, որ արդեն չափահաս են և կարող են ըմբոստանալ կամ չափազանց լուրջ արձագանքել, երբ հարգանքի պակաս են զգում:
- Նրանք բազմաթիվ երազանքներ, հոբբիներ և հավակնություններ ունեն:
- Նրանք ցանկանում են վայելել մեծահասակների վստահությունը և ունակ են ճիշտ որոշումներ կայացնելու:

Իրավիճակ 1. Երեխան կախվածություն ունի «խաղերից»

Ռոբերտը սովորում է իններորդ դասարանում: Նա ընտանիքի երեք երեխաներից երկրորդն է: Նրա մայրը պետական պաշտոնյա է, իսկ հայրը միջբաղաբային ավտոբուսավար է և հաճախ տանից բացակայում է: Ռոբերտը կախվածություն ունի էլեկտրոնային խաղերից և հաճախ փախչում է դասերից՝ առցանց խաղեր խաղալու համար: Ծնողները փորձում են ստիպել նրան դադարել դասերից փախչել, սակայն նա շարունակում է դա անել: Ծնողները զգում են, որ անգոր են կանխել նրա կախվածությունը օնլայն խաղերից: Երբեմն նրա հայրը պարզապես այրվում է զայրույթից և քիչ է մնում ծեծի նրան:

Լուծումը

Անհնար է ստիպել երեխային անմիջապես թողնել էլեկտրոնային խաղերը: Ծնողները պետք է խոսեն երեխայի հետ, քննարկեն իրավիճակն ու սահմանեն պայմանները, որոնք թույլ կտան երեխային որոշակի ժամերի խաղալ: Այս ժամանակահատվածն աստիճանաբար կկրճատվի: Ի հավելումս, նրանք պետք է երեխային կյուբեր տրամադրեն, որոնցում բացատրվում է էլեկտրոնային սարքավորումների չափից ավելի օգտագործման բացասական հետևանքները: Ծնողները պետք է նաև փորձեն շահել երեխայի վստահությունը, հասկանալ երեխային հուզող հարցերը և խնդիրները, ապա տրամադրել անհրաժեշտ ուղղորդում: Նրանք նաև պետք է ծանոթանան իրենց երեխայի ընկերների հետ, քանի որ վերջիններս կարող են օգնել երեխային վերադարձնել նորմալ ուսումնառության և կյանքի ուղուն: Ընտանիքը, հատկապես ծնողները, պետք է գործեն համատեղ և գտնեն երեխաներին դաստիարակելու և կառավարելու միասնական ուղին՝ հակասական մոտեցումներից խուսափելու համար:

Իրավիճակ 2. Երեխան ընդօրինակում է իր ընկերների վատ սովորությունները: Նա ստում է, իր ընտանիքի անդամներից կամ այլ մարդկանցից դրամ կամ իրեր է գողանում:

1. Գայանեն խելացի, վառ անհատականություն ունեցող տասնվեցամյա աղջիկ է: Նրա ծնողները շուկայում իրեր են վաճառում և մշտապես զբաղված են: Նա հաճախ տանը մնում է տատիկի և պապիկի խնամքին: Նա շաբաթական ընդամենը մեկ կամ երկու անգամ է ճաշում ծնողների հետ: Նա միանում է վատ վարք դրսևորող պատանիների խմբին, սակայն նրա ծնողներն անտեղյակ են այդ մասին : Նրա առօրյան միանգամայն փոխվում է, սակայն ոչ ոք դա չի նկատում: Իր անշնորհք ընկերների ազդեցության տակ նա տարվում է խաղամոլությամբ ու գնումներով, ներկում է մազերը: Ի վերջո նրան բռնում են հագուստի խանութից գողություն կատարելիս:

Լուծումը

Նախ և առաջ երեխայի սխալը ծնողների սխալն է: Անկախ իրենց գերզբաղված ռեժիմից՝ մեծահասակները պետք է ժամանակ հատկացնեն իրենց երեխայի հետ անցկացնելու և նրա մասին հոգ տանելու համար: Նրանք կարող են օգնել երեխային հասկանալ իրենց սխալ վարքի հետևանքները: Նրանց հսկողությամբ երեխային պետք է պարտադրվի վերադարձնել գողացված իրերը և խոստանալ այլևս երբեք նման բան չանել: Երբեմն, անհրաժեշտության դեպքում, ծնողները կարող են փոխհատուցել երեխայի զանցանքների համար: Այս ամենն ուղղված է օգնելու երեխային հասկանալ, որ բոլոր սխալները կարելի է ուղղել, և որ ցանկության դեպքում նա կարող է վերականգնել դրական հարաբերությունները շրջապատի մարդկանց հետ:

1. Զրիստինեն տասներկուամյա աղջիկ է և ունի երեքամյա եղբայր: Նա ապրում է բարեկեցիկ ընտանիքում: Նրա ծնողները պետական ծառայողներ են: Ծնողները մշտապես խնդրում են Զրիստինեին հետևել իրենց պահանջներին: Նրանից հատկապես պահանջվում է մշտապես զիջել եղբորը, անկախ նրանից, նա ճիշտ է, թե սխալ, քանի որ նա փոքր է և ընտանիքի միակ որդին է: Անցյալ ամիս նրա մայրը կորցրեց 50,000 հայկական դրամ: Նա համոզված չէր՝ արդյոք գումարը գողացել են, թե պարզապես ինքն է սխալվել գնումներ կատարելիս: Սակայն նա պնդում է, որ գումարը Զրիստինեն է գողացել և պահանջում է աղջկանից ներողություն խնդրել: Զրիստինեն ենթարկվեց մայրիկի պահանջին, սակայն այդ ամենը խիստ վրդովեցրեց աղջկան: Նա սկսում է դառնալ համառ ու անմիջականորեն վիճել ծնողների հետ: Նա նաև սկսում է դիտավորյալ փող գողանալ: Նա հաճախ նախանձում է կրտսեր եղբորը: Երբեմն նա միանգամայն անպատեհ և անխոհեմ վարք է դրսևորում:

Լուծումը

Երեխան կարող է լինել զգայուն, սակայն միաժամանակ զգացմունքային առումով ոչ շատ կայուն, քանի որ նրա զգացմունքները բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվում: Երեխային մեղադրանքներ ներկայացնելը առանց նրան ուշադիր լսելու կամ նրա նկատմամբ որոշակի վստահություն ցուցաբերելու վկայում է հոգաժողության պակասի մասին, որը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, ինչպես վստահության կորուստը մեծահասակների նկատմամբ և բացասական վարքաձևերի դրսևորումը: Երեխան կարող է դառնալ անհնազանդ, անխոհեմ, գերինքնավստահ, ցուցամոլ և համառ: Փորձելով ապացուցել իր անկախությունը և հասունությունը նա կարող է հակված լինել մերձենալ անցանկալի ընկերական խմբերի:

Մեծահասակները պետք է փորձեն բացահայտել երեխայի զգացմունքների կամ վարքի փոփոխության պատճառները: Եթե դրանում առկա է մեծահասակների մեղքը, նրանք պետք է ներողություն հայցեն երեխայից: Եթե դա երեխայի մեղքն է, մեծահասակները պետք է սխտեմատիկ կարգապահություն պարտադրեն: Երբ երեխան հետևում է ինամատարների պահանջներին, նրան պետք է ժամանակին խրախուսել և գովել:

3. Ռուբենը տասնչորսամյա աշակերտ է և սովորում և հնազանդ է իններորդ դասարանում: Առաջ նա շատ լավ էր սովորում, և հնազանդ տղա էր իր ծնողների և ուսուցիչների համար: Սակայն իններորդ դասարանի սկզբից նա սկսեց հագնել նորաձև հագուստ և ամեն երեկո դուրս գալ ընկերների հետ: Նա սովորեց ծխել և սուրճ խմել: Նա սիրային նամակներ է գրում ծանոթ աղջիկներին: Նա ստում է ծնողներին և փախչում դասերից: Երբ ծնողներն արգելում են նրան շփվել վատ ընկերների հետ, Ռուբենը գոռում է նրանց վրա և հեռանում տանից՝ մնալու իր ընկերների հետ: Նրա ընտանիքը լճացման մեջ է և չգիտի, թե ինչպես վարվել նրա հետ:

Լուծումը

Ծնողները պետք է փորձեն նորից խոսել տղայի հետ: Չրույցը կարող է լինել անմիջական կամ ոչ անմիջական՝ էլեկտրոնային փոստի, նամակի, օրագրի կամ երրորդ անձանց, օրինակ ուսուցչի, տատիկի ու պապիկի, երեխայի կողմից հարգված և վստահված բարեկամի, կամ լավ ընկերոջ միջոցով: Չրույցի ընթացքում ծնողները պետք է երեխային վերաբերվեն արդարամտորեն, հարգանքով և հավասարի պես և աշխատեն լսել ու հասկանալ նրա զգացմունքներն ու մտքերը: Երբ նա լավ գաղափար կամ միտք է արտահայտում, ծնողները պետք է խրախուսեն ու գովեն նրան, որպեսզի կոնտրաստ ստեղծեն այն իրավիճակի հետ, երբ երեխան կարող է սխալ գործել կամ չմտածված քայլեր կատարել:

Յիշեցե՛ք

- Չարգեք երեխային և հստակ, բարձր չափանիշներ սահմանեք նրա համար:
- Երեխաների հետ քննարկեք և հստակ համաձայնության եկեք նրանց առաջադրվող պահանջների շուրջ:
- Խնդրեք երեխաներին կատարել իրենց խոստումները և պարտավորությունները:
- Ընկալեք և կարեկից եղեք երեխաների գործած սխալներին: Բացատրեք իրադրությունը ձեր երեխաներին այնպես, որպեսզի նրանք հասկանան, թե որն է ճիշտը, իսկ որը՝ սխալը, և կարողանան իրենց լավ դրսևորել:
- Մեծահասակները պետք է փորձեն դրական օրինակ ծառայել իրենց երեխաներին:
- Երեխաներին ինչպես գովաբանել, այնպես էլ նրանց սխալներն ուղղել և կարգապահության հրավիրել անհրաժեշտ է ժամանակին և պատշաճ կերպով:
- Երեխաների հետ եղեք առատաձեռն ու հանդուրժող:

Լավ ծնողներ լինելու և դրական ու արդյունավետ դաստիարակության հմտություն զարգացնելու համար Ձեզ ժամանակ է պետք՝ սովորելու և սովորածը կիրառելու համար:

***Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով
ՀՀ-ում գործող պետական ծառայություններ***

Ոստիկանություն
1-02, 010-54-69-14

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն՝ 911,
Հեռ.՝ (+374 12) 31 77 20, (+374 60) 44-02-07

Մարդու իրավունքների պաշտպան ԹԵԺ ԳԻԾ՝ 116
հեռ.՝ 010 53 76 51
Էլ.փոստ՝ ombuds@ombuds.am

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
Հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ
Քրիստինա Հովհաննիսյան, Հեռ.՝ (+374 10) 56 53 21,
Էլ. փոստ՝ kristina.hovhannisyan@mlsa.am

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
Երեխաների հիմնահարցերի բաժին
հեռ.՝ (010) 56-53-21

